



## ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ը

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆՅԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայկական ՍՍՌ առաջին գումարման Գերագույն Սովետի լիազորություններն ավարտվելու կապակցությամբ, «Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի ընտրությունների կանոնադրության» 62-րդ հոդվածի հիման վրա Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի Գերագույն Սովետի Նախագահությունը որոշում է.

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի ընտրությունները նշանակել 1947 թվի փետրվարի 9-ին՝ կիրակի օրը:

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության Նախագահ՝ Մ. ՊԱՊՅԱՆ

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության

Քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար՝ Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

28 Նոյեմբերի 1946 թ.

բաղ. երեկվան

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ը

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ

ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի ընտրությունների կանոնադրության» 35-րդ և 36-րդ հոդվածների հիման վրա հաստատել Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի ընտրությունների Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ կազմված հասարակական կազմակերպությունների և աշխատավորների ընկերությունների հետևյալ ներկայացուցիչներից.

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ՝ Միֆայել Գալստի Թումանյան ռեսպուբլիկայի բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտական հիմնարկությունների աշխատողների պրոֆեսորնալ միության կողմից:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Արտաշես Սարգսի Մատինյան — Երևանի Զերծիճակու անվան գործարանի բանվորների, ծառայողների և ինժեներատեխնիկական աշխատողների կողմից:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի քարտուղար՝ Նիկոլայ Պավլովիչ Շչերբակով — ռեսպուբլիկայի Քաղլուսավորական հիմնարկությունների աշխատողների պրոֆեսորնալ միության կողմից:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամներ՝

Գուրգեն Թադևոսի Ղազանչյան — Երևանի գյուղատնտեսական գործարանի բանվորների, ծառայողների և ինժեներատեխնիկական աշխատողների կողմից:

Վարդուշ Տիգրանի Նալչաչյան — ռեսպուբլիկայի լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցների աշխատողների պրոֆեսիոնալ միության կողմից:

Ռուբեն Ղազարի Հակոբյան — ռեսպուբլիկայի եճուղային և հիդրոտեխնիկական շինարարության աշխատողների պրոֆեսիոնալ միության կողմից:

Գեղամ Բագրատի Ալեքյան — Լենինյան Կոմունիստական երիտասարդության Միության կողմից:

Աշխեն Տիգրանի Իշխանյան — ռեսպուբլիկայի Պետհիմնարկությունների պրոֆեսիոնալ միության կողմից:

Մամեդ Սալմանովիչ Իսկենդերով — ռեսպուբլիկայի Քաղաքացիական հիմնարկությունների աշխատողների պրոֆեսիոնալ միության կողմից:

Ժենյա Բաղիշի Եղիազարյան — Սիսիանի շրջանի Ուղ դյուղի «Կարմիր նույնաբեր» կոլխոզի կոլխոզիկների կողմից:

Մովսես Մելիքի Հարությունյան (Արաղի) — Հայաստանի Սովետական գրողների միության կողմից:

Անդրանիկ Միսակի Խաչատրյան — Լենինականի շոգեքարշային տնտեսության շրջուրդ բաժանմունքի բանվորների, ծառայողների և ինժեներատեխնիկական աշխատողների կողմից:

Գևորգ Վարդանի Գյուլեյջյան — Պ զորամասի զինծառայողների կողմից:

Երուս Սմբատի Ղափիյան — Նոր Բայազետի շրջանի Սարուխան գյուղի Բերիայի անվան կոլխոզի կոլխոզիկների կողմից:

Վաղինակ Թևոսի Գուրգենյան — ՄՏ կայանների և հողային օրգանների աշխատողների պրոֆեսիոնալ միության կողմից:

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության Նախագահ՝ Մ. ՊԱՊՅԱՆ  
Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության

Քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար՝ Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

6 դեկտեմբերի 1946 թ.

բաղ. ԵՐԵՎԱՆ

## Հ Ա Յ Ր Ե Ն Ա Դ Ա Ր Ձ Ն Ե Ր

Մի տարի առաջ ՍՍՌՄ կառավարությունը արտասահմանում ապրող հայերին թույլ տվեց վերադառնալու իրենց Հայրենիք՝ Սովետական Հայաստան: Այս տարվա սկզբից արդեն սկսվեց ներգաղթողների առաջին խմբերի ժամանումը: Ամառը և աշնանը, համարյա թե ամեն օր, նավերով ու երկաթուղով Բաթումիի կամ սահմանափակ Ջուֆա կայարանի վրայով Սովետական Հայաստան էին ժամանում Եվրոպայի և Մերձավոր Արևելքի զանազան երկրներից ներգաղթողների նորանոր խմբեր:

Ամառվա ընթացքում Սովետական Հայաստան են ներգաղթել Սիրիայից և Լիբանանից մոտ 20 հազար հոգի, իսկ Իրանից՝ ավելի քան 20 հազար հոգի: Հայրենիք են վերադարձել երկար տարիներ Բալկանյան երկրներում՝ Ռումինիայում, Բուլղարիայում, Հունաստանում ապաստան գտած շատ հայեր: Ներգաղթողների թիվը նշանակալից կերպով գերազանցում է 1946 թվա-

կանի համար նախատեսված թվին: Ընթացիկ տարում արտասահմանից Սովետական Հայաստան վերադարձած հայերի ընդհանուր թիվն է՝ 51.000:

Ներգաղթածների մեջ կան շատ գյուղացիներ, կառուցող բանվորներ, մետաղագործներ, տեքստիլագործներ, զանազան արհեստի տեր անձինք և ինտելիգենցիա:

Աշխատունակ բոլոր անձինք, առանց բացառության տեղավորվել են աշխատանքի՝ ըստ իրենց մասնագիտության, թե՛ արդյունաբերության մեջ և թե՛ գյուղատնտեսությունում: Այդ հնարավոր էր անել միայն սովետական երկրում, որտեղ Սովետական Կոմստիտուցիայով ամեն մի սովետական քաղաքացու վերապահված է աշխատանքի իրավունքը:

Լենինականում, Էջմիածնում և այլուր նորիկ արհեստավորների համար կազմակերպվել են կադրողների, փոխադրողների, ոսկերիչների և մետաղագործների արտել-

ներս: Բոլոր արտեղնելիքն տրամադրված են արտադրական շենքեր և արտեղներն արդեն աշխատանքի են անցել:

Հազարավոր ընտանիքներ՝ ըստ իրենց ցանկության ընդունվել են կոլխոզների մեջ: Նոր կոլխոզներ են բռնադրվում աշխատում են կոլխոզներում: Էջմիածնի, Արտաշատի, Ախուրյանի և մյուս շրջաններում կազմակերպվել են խմբակներ, որտեղ նորեկներն ուսումնասիրում են գյուղատնտեսական արտելի ստալինյան կանոնադրությունը: Նորեկ երիտասարդների մի խումբ սովորում է տրակտորիստների դասընթացներում:

Սովետական կառավարությունը ամեն տեսակի օգնություն է ցույց տալիս նորեկներին իրենց տնտեսությունը կազմակերպելու գործում:

Ամենակարիքավորներին տրվում է հաշուատ, վառելիք և տնային իրեր: Դպրոցական հասակ ունեցող բոլոր երեխաներն ընդգրկվել են դպրոցներում: Նրանց գերակշռող մասն առաջին անգամն է հնարավորություն ստանում ուսումնասիրելու մայրենի լեզուն ու գրականությունը: 600 պատանիներ ընդունվել են արհեստավորական և ֆաբրիկա-գործարանային տեսակետներում: Վ. Մ. Մոլոտովի անվան Պետական համալսարան, Պոլիտեխնիկ ինստիտուտ, Կոնսերվատորիա և Երևանի մյուս բարձրագույն դպրոցներն են ընդունվել հարյուրավոր նորեկ սովորողներ:

Տասը տարի առաջ ռեսպուբլիկայում

փակվել էին անգրագիտության վերացման կայանները, քանի որ նրանց կարիքն այլևս չէր զգացվում. հայրենիք վերադարձած հայերի մեջ կան շատ անգրագետներ. նրանց համար կարիք եղավ նորից բաց անել այդ կայանները և կազմակերպել գիշերային հանրակրթական դպրոցներ:

Ներկայումս Սովետական Հայաստանը պատրաստություններ է տեսնում դալիք տարում ընդունելու նոր հազարավոր արտասահմանյան հայերի: Քաղաքներում ու գյուղերում կառուցվում են 2400 տներ: Մինչև տարվա վերջը պատրաստ պիտի լինի 135 հազար քառակուսի մետր բնակելի տարածություն:

Վերադարձած հայերից շատերն Երևանում իրենց համար սեփական տներ են կառուցում: Երևանի քաղաքային Սովետը հողամասեր է հատկացրել 1500 ընտանիքի: Արտաշատի, Բասարաբեշարի և մյուս շրջանների վերաբնակները տեղավորվել են նոր տներում: Սեփական տուն կառուցողներից յուրաքանչյուրին տրվում է 25-ից մինչև 30 հազար ռուբլի վարկ, ինչպես նաև շինանյութեր և փոխադրական. ցույց է տրվում տեխնիկական օգնություն:

Հայաստանի Կ(բ)Պ ԿԿ-ին հասցեագրված բազմաթիվ նամակներում ներգաղթածները իրենց խորը երախտագիտությունն ու ջերմ շնորհակալությունն են հայտնում ՍՍՄԿ կառավարությանը և անձամբ ընկեր Ստալինին՝ ամբողջ աշխարհում ցրված արտասահմանյան հայերի նկատմամբ ցուցաբերած հայրական հոգատարություն համար:

## ՀԱՐԱՋԱՏ ԶՈՂԻ ՎՐԱ

ԱՂԻՆ.—Մարալիկի գյուղատնտեսական արտելը մեծացավ 11 ընտանիքով, որոնք ժամանել էին Սիրիայից: Նրանք բոլորը տեղավորվեցին նախօրոք պատրաստված բնակարաններում ու դարձան կոլխոզի հավասարազոր անդամներ: Նոր կոլխոզիկներն ու կոլխոզնիկուհիները Ֆռանդով են աշխատում հայրենի հողի վրա՝ գիտակցելով, որ այսուհետև իրենց աշխատանքը ոչ թե տերերի հարստացման պիտի ծառայի, այլ ողջ սովետական ժողովրդի բարօրությանը:

Նրանցից Տ. Պողոսյանն աշխատում է որպես տրակտորավարի օգնական և սոց-

մլրցման մեջ դառնվելով իր օրվա առաջադրանքը կատարում է 200 տոկոսով:

Մեծ ոգևորությամբ է աշխատում Ա. Անտոնյանը. աշխատելով կապիչի վրա նա օրվա առաջադրանքը կատարում է 165 տոկոսով: Պլանները գերակատարում է նաև կոլխոզնիկուհի Մ. Փշյանը: Նոր կոլխոզնիկների ու կոլխոզնիկուհիների աշխատանքային գրքույկներում, ինչպես հայելում մեջ, արտացոլվում է նրանց կատարած աշխատանքը: Նոյեմբեր ամսում նրանցից յուրաքանչյուրը գրանցված ունի 30—35 աշխօր:

## ՍՈՎԵՏԱԿԱՆ ՆՈՐ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԸՆՏԱՆԻՔԸ

Նոր խարբերդի Ա. Միկոյանի անվան Մանվածքագործվածքային գործարանում հիացմունքով են խոսում վերջերս Ռուսինիայից հայրենիք վերադարձած սովետական նոր քաղաքացի Հմայակ Ստեփանյանի ընտանիքի մասին: Սովետական Հայաստան գալուց մի քանի օր հետո Ստեփանյանի ընտանիքը, որ բաղկացած է 15 հոգուց, աշխատանքի

անցավ այս գործարանում: Հմայակ Ստեփանյանը հյուան է, նրա որդիները՝ Ստեփանը, Հարությունը, Արմենակը, Համազասպը, աղջիկները և կինը հմուտ մանողներ ու կարողներ են: Ստեփանյանների ընտանիքը մտել է Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի ընտրությունների պատվին ծավալված մրցության մեջ և ստանձնած պարտավորությունները գործ է դարձնում:

## „ՊՈՂՊՈՍ“ ՄԵՏԱՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԵԼԸ

Բուլղարիայից Սովետական Հայաստան վերադարձած հայերի մի խումբ, 53 մարդուց բաղկացած, Լենինականում հիմնեց մետաղագործական արտել, որն ընդհանուր ժողովի որոշմամբ կոչվեց «Պոլպոս»:

Լենինականի Քաղսովետի գործկոմը արտելի համար հատկացրել է հատուկ շենք, որն ունի բոլոր հարմարությունները:

Կրիվ կարողությամբ գործում են փականագործական, խառատի, նիկելի, դարձնոցի, մահճակալի, ամանեղենի և ձուլող ցեխերը: Այստեղ արտադրվում են վառարաններ, որոնք պիտանի են վառելիքի բոլոր տեսակների համար և ունեն բազմաթիվ հարմարություններ: Արտադրվում են մահճակալներ ու մահճակալի ցանցեր, որոնք նուրբ են, թեթև ու դիմացկուն: Արտադրվում են նաև բարձրորակ բազմաթիվ ամանեղեններ, անկիզելի արկղեր, դռներ, լուսամուտների երկաթե մասեր, փականներ, մեխեր և այլն:

Արտեղականներն իրենց սեփական միջոցներով են ձեռք բերել մեքենայական ամբողջ սարքավորումը և տեղափոխել Սովետական Հայաստան:

Արտելի վարչության նախագահ Կարապետյանն ասում է. «Թերթերի ու ռադիոյի շնորհիվ մենք լավ ծանոթ էինք մեր հայրենիքում՝ Սովետական Հայաստանում եղած հասարակական, տնտեսական և պատահական կազմակերպման ձևերին: Մենք գիշերին, որ արհեստավորն այստեղ ապահովուած է մշտական աշխատանքով, որ նա կարող է աշխատել իր ցանկացած տեղում»:

Արտեղականներից աչքի են ընկնում Վ. Ուզունյանը, Օ. Խաչոյանը, Հ. Սիմոնյանը, Թ. Թերզյանը, որոնք արտադրական առաջադրանքները կատարում են 150-200 տոկոսով:

## ՆԵՐԳԱՂՔԱԾ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ՍՏԵՂՍԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԵԿՈՆ

Օրերս Գրողների տանը տեղի ունեցավ արտասահմանից Սովետական Հայաստան ներգաղթած հայ գրողների ստեղծագործություններին նվիրված երեկո:

Երեկոյին ներկա էին գրողներ, արվեստագետներ, ուսանողներ և քաղաքի ինտելիգենցիայի ներկայացուցիչներ:

Երեկոն բացեց Հայաստանի Սովետական Գրողների Միության նախագահ, Ստալինյան մրցանակի լուսավորատ Ավ. Իսահակյանը: Գրողների Միության անունից ողջունելով երկարամյա տարագրությունից հայրենիք վերադարձած գրչի եղբայրներին՝ ընկ. Իսահակյանը ցանկացավ նրանց նորանոր հաջողություններ սովետահայ գրականության հետագա վերելքի, մեր հերոսական առօրյան պատկերող բարձրարժեք գեղարվեստական գործեր ստեղծելու բնագավա-

ռում: Նա շեշտեց, որ հայ ժողովրդի զավակները գտնվելով օտարության մեջ, միշտ վառ են պահել հայրենիքի սերը, ապրել և ուրախացել են նրա հաջողություններով: Ընկ. Իսահակյանն ասաց, որ միայն բուլղարիկների մեծագործ պարտիզի, սովետական կառավարության և մեծ առաջնորդ բնկեր Ստալինի հազատարության շնորհիվ հնարավոր դարձավ սփյուռքի հայության վերադարձը մայր հայրենիք:

Ներգաղթած հայ գրողների ստեղծագործությունների մասին զեկուցեց Հայաստանի Սովետական Գրողների Միության քարտուղար ընկ. Գ. Բորյանը:

Ընկ. Բորյանն ընդգծեց, որ գաղութահայ գրականության պրոգրեսիվ—դեմոկրատական ներկայացուցիչները ստեղծագործելու մաքառել են միշտ հուսալով, որ իրենց

եղադրած ազատութիւնը կարող են գտնել միայն Սովետական Հայաստանում, որտեղ վերածնված հայ ժողովուրդը տերն է իր կյանքի ու բախտի և կերտում է իր երջանիկ ապագան: Ընկ. Բորչանը հայրենիք վերադարձած բանաստեղծների գործերից բերելով մի շարք օրինակներ՝ ցույց տվեց, որ նրանք գտնվելով օտարության մեջ անսահման սիրով ձգտել են դեպի մայր հայրենիք և գովերգել են Սովետական Հայաստանը, մեր հերոս ժողովուրդին և մեծ Ստալինին: Զեկուցողը կարդաց հատվածներ Վահան Թերջանի, Արամ Արմանի, Հրանտ Հրահանի և ուրիշների բանաստեղծություններից՝ ցույց տալով առաջադիմական գաղափարներ այդ հեղինակների գործերում:

Զեկուցողը նշեց, որ հայրենիք վերադառնալուց հետո արտասահմանյան հայ գրողների քնարը հնչում է նոր ուժով: Նրանք իրենց ամբողջ ձայնով երգում են Սովետական Հայաստանը, սովետական ժողո-

վրդի սխրագործությունները, ստալինյան նոր հնգամյակը: Այնուհետև ընկ. Բորչանը մանրամասն կանգ առնելով առանձին գրողների վրա, ընդգծեց, որ նրանք այսուհետև գտնվելով սովետահայ գրողների ընտանիքում կտան նորանոր բարձրորակ գործեր:

Զեկուցումից հետո հայրենիք վերադարձած գրողներին ողջունի խոսք ասացին ընկ. Ստ. Զորչանը և Ս. Տարոնցին:

Իրենց անողջագործությունների ընթերցմամբ հանդես եկան ներգաղթած գրողներ Վ. Թադեւսյանը, Գ. Գյուլյանը, Ա. Արմանը, Վ. Դարբինյանը, Հ. Հրահանը, Հովհ. Ղուկասյանը, և Ստ. Ալաջալյանը:

Վերջում հանդես եկավ բանաստեղծ Սարմենը, որը կարդաց արտասահմանից Սովետական Հայաստան ներգաղթած գրողներին նվիրված իր բանաստեղծությունը:

Երեկոյն անցավ ջերմ և բարեկամական մթնոլորտում:

## ՌՈՒՄԻՆԱԶԱՅԵՐԻ ՆՎԵՐԸ

Ռուսաբնատում բնակվող Խոջա Հարությունը Երևանի Հանրալին գրադարանին նվիր է ուղարկել 395 գիրք: Հիմնականում դա պատմական և գեղարվեստական գրականություն է հայերեն և եվրոպական գաղապան լեզուներով: Ուղարկված գրքերի մեջ է գտնվում ամենահին հրատարակություններից՝ 1596 թվականի, այսպես կոչված «Paradignata»-ը, որտեղ ներկայացված են մեծ թվով ազգութունների գրքերի նմուշները. հայկական գիրք ներկայացված է սովետաբանից բերված փոքրիկ հատվածով: Գրքերից շատերը վերաբերում են հայ ժողովրդի կուլտուրային, կենցաղին, պատմական ճակատագրին: Նրանց մեջ է գտնվում ֆրանսերեն լեզվով 1760 թվին հրատարակված «Համաշխարհային պատմությունը»՝ փեց հատորով: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում է Ա. Ա. Վասիլևի «Բյուզանդական կայսրության պատմությունը»-ի ֆրանսերեն թարգմանությունը՝ հրատարակված 1936 թվին Փարիզում:

Արևմտա—եվրոպական գրականությունից ուշադրություն են գրավում Շերպիլիի սքանչելի հրատարակությունները 21 հատորով

անգլերեն և գերմաներեն լեզուներով, Շիլլերը՝ 12 հատորով, Գյոթեն, Հայնեն և այլն: Շատ շքեղ են Հոմերոսի երկերի լրիվ ժողովածվի չորս հատորները՝ բնագրով և գերմաներեն լեզվով:

Ուղարկված է նաև չափազանց շատ նկարչական ալբոմներ հայտնի նկարիչներ Սանդրո Բոտիչելլիի, Վան Գոկի և այլոց աշխատանքներով: Երկու ալբոմներում գետնված նրկարներով կարելի է ծանոթանալ հայ ինքնատիպ նկարիչ Կ. Զամբախյանի հարուստ ստեղծագործության հետ. նրանք պարունակում են 150 աշխատանք—պորտրետներ, պեյզաժներ, նատյուրմորտներ:

Հայաստանի հնագրության մանրանկարչությունը ներկայացված է մի առանձին ալբոմով:

Հայաստանի պատկերասրահը ունի հայերից առաջել է նկարիչ Բ. Վաղդանյանի 50 և նկարիչ Գ. Ավագյանի երկու նկարները: Ավագյանի աշխատանքներից մեկը ուղարկված է հատուկ՝ Ավետիք Իսահակյանի համար:

Ստացված է նաև 60 մահճակալից բաղկացած հիվանդանոցի սարքավորում:

## ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆԻ ՇԵՏ ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ

Դեկտեմբերի 9-ին Արտասահմանի հետ կուլտուրական կապի Հայկական ընկերության շենքում տեղի ունեցավ անգլիական մեծ դրամատուրգ Վիլյամ Շեքսպիրի դա-

## ԿԱՊԻ ՀԱՅՎԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

րաշրջանին, կյանքին ու ստեղծագործությանը նվիրված ցուցահանդեսի բացումը: Ցուցահանդեսի էքսպոնատները ուղարկված են ՍՍՌՄ-ի հետ կուլտուրական կապի

անգլիական ընկերության կողմից:

Էքսպոնատների թվում կան թատերական ղեկավարների էսքիզներ, դրամաների, եկեղեցիների լուսանկարներ, Շեքսպիրի դարաշրջանի քաղաքացիների կտիպեր, ապառազի-նության և տնային գործածության առարկաներ, Շեքսպիրի պիեսների հուշարարական նմուշը, Լոնդոնի 16-րդ դարի հատակագիծը և քարտեզը:

Ցուցահանդեսը Արտասահմանի հետ կուլտուրական կապի Հայկական ընկերության արվեստի սեկցիայի կողմից լրացված է «Շեքսպիրը հայ բեմում» բաժնով, որը

այստեղծում է ղլխավորապես Շեքսպիրի դրամաների բեմադրությունները Սովետական Հայաստանի թատրոններում:

Ցուցահանդեսը բաց արեց Արտասահմանի հետ կուլտուրական կապի Հայկական ընկերության արվեստի սեկցիայի փոխնախագահ՝ արվեստի վաստակավոր գործիչ Արա Սարգսյանը, որից հետո «Շեքսպիրը հայ բեմում» թեմայով հաղորդում արեց արվեստի սեկցիայի փոխնախագահ՝ ռեսպոնսիվայի ժողովրդական արտիստ Գ. Զանիբեկյանը:

## ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՇԵՏ ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ ԿԱՊԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Արտասահմանի հետ կուլտուրական կապի Հայկական ընկերությանը կից կազմվել են գրականության, ժողովրդական առողջապահության և արվեստի սեկցիաները: Նրանք կոչված են կուլտուրական կապ հաստատելու: արտասահմանյան առաջադիմական ընկերությունների և կազմակերպությունների համապատասխան սեկցիաների հետ:

Արտասահմանի հետ կուլտուրական կապի Հայկական ընկերության սեկցիաների մեջ մտնել են Հայկական ՍՍՌ գրականության, թատրոնի, երաժշտության, կերպարվեստի և ժողովրդական առողջապահության գործիչները:

Գրականության սեկցիայի բյուրոյում ընտրված են Ա. Ի. Իսահանյանը, Գ. Դեմիրճյանը, Ստ. Զորյանը, Ն. Զարյանը, Գ. Սարյանը, Գ. Աբովը, Հր. Քոչարը և ուրիշները: Գրականության սեկցիայի նախագահ է ընտրվել

ված Գ. Դեմիրճյանը, փոխնախագահներ՝ Գ. Աբովը և Ստ. Զորյանը:

Առողջապահության սեկցիայի բյուրոյում ընտրված են՝ Ա. Մելիք-Աղամյանը, Ռ. Յուլյանը, Գ. Ղևոնդյանը, Ա. Հակոբյանը, Ն. Հակոբյանը, Բ. Ֆանարջյանը և ուրիշները: Ժողովրդական առողջապահության սեկցիայի նախագահ է ընտրված Գ. Ղևոնդյանը, փոխնախագահներ՝ Ա. Մելիք-Աղամյանը և Ռ. Յուլյանը:

Արվեստի սեկցիայի բյուրոյում ընտրված են Մ. Սարյանը, Հ. Դանիելյանը, Գ. Զանիբեկյանը, Ա. Գուլակյանը, Վ. Վաղարշյանը, Հ. Բեկնազարյանը, Ա. Սարգսյանը, Ք. Քուչնարյանը և ուրիշները: Արվեստի սեկցիայի նախագահ է ընտրված Հ. Դանիելյանը, փոխնախագահներ՝ Գ. Զանիբեկյանը և Ա. Սարգսյանը:

## ՍՍՌ-ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՅ ՆՈՐ ԹՂԹԱԿԻՑ-ԱՆԴԱՄՆԵՐ

Դեկտեմբերի 4-ին ՍՍՌ-Գիտությունների Ակադեմիայի ընդհանուր ժողովը բաց քննարկությանը թղթակից-անդամներ ընտրեց սովետական գիտությունը առաջի ընկնող հետազոտություններով և հայտնագործություններով հարստացրած 112 գիտնականների, որոնց թվում հայ ժողովրդի հետևյալ գավակներին:—

Ա. Ի. Ալիսանյանին.— ֆիզիկո-մաթեմատիկական գիտությունների բաժանմունքի գծով:

Ի. Լ. Կնունյանցին.— քիմիական գիտությունների բաժանմունքի գծով:

Ա. Ա. Ավագյանին.— բիոլոգիական գիտությունների բաժանմունքի գծով:

Ս. Գ. Բարխուդարովին.— գրականության և լեզվի բաժանմունքի գծով:

## ԿՈՄՊՈԶԻՏՈՐ ԱԼ. ՍՊԵՆԴԻԱՐՈՎԻ ԾՆԵԴՅԱՆ 75-ԱՄՅԱԿԸ

Նրևանի հասարակայնությունը արժանապայել կերպով նշեց անվանի կոմպոզիտոր Ալ. Սպենդիարովի ծննդյան 75-ամյակը:

Լենինի շքանշանակիր օպերայի և բալետի

պետական թատրոնում նույնմբերի 3-ին բեմադրվեց Ալ. Սպենդիարովի «Ալմաստ» օպերան: Ներկայացումից առաջ կոմպոզիտորի կյանքի և ստեղծագործական բեղմնավոր

գործունեության մասին ներածական խոսք  
ասաց ռեսպուբլիկայի արվեստի վաստակա-  
վոր գործիչ, նրա ժողովուրդի Ս. Գասպարյանը:

Այդ օրը երևանի և Մոսկվայի ռադիո-  
կայաններից հաղորդվեցին նաև հատուկ  
համերգներ:

## ՆՈՐ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՎԱՌԱՐԱՆ

Երևանի Կաբելի գործարանում շահա-  
գործման հանձնվեց էլեկտրալար պատ-  
րաստող ցեխի նոր խոշոր էլեկտրական  
վառարանը: Վառարանում էլեկտրական շի-  
կացման է ենթարկվում լարը, որի հետե-  
վանքով նա փափկանում և շերտավեջու  
հատկություն է ստանում:

Մինչև այժմ գործարանը էլեկտրալար  
էր ստանում Միության զանազան գործա-  
րաններից: Նոր վառարանի շահագործումով  
Երևանի Կաբելի գործարանը կտա էլեկ-  
տրալարերի սեփական արտադրանք:

(224)

## ՄԱՆՐ ՀԻԴՐՈՏՈՒՐԲԵՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ

Մանր հիդրոտուրբինների գործարանը  
ստալինյան նոր հնգամյայի նորակառույց-  
ներից է: Այդտեղ կատարվելու է մոտավո-  
րապես 17 միլիոնի շինարարություն, և  
երբ գործարանը լրիվ կարողությամբ շահա-  
գործման հանձնվի, տարեկան կտա 300

հիդրոտուրբին: Ցեխերի կորպուսներն արդեն  
բարձրացել են: Մեխանիկական ցեխն ար-  
դեն լիովին պատրաստ է: Սարքավորումներն  
ստացվել ու տեղափոխվել են: Սարքավորում-  
ների տեղադրումն ավարտվեց Սովետական  
Հայաստանի 26-րդ տարեդարձի օրը:

## Յ Ա Լ Ի Ն Ի Զ Ր Ա Ն Ց Ք Ը

Ռեսպուբլիկայի նոր հնգամյա պլանի կա-  
րևոր խնդիրներից մեկը Թալինի ջրանցքի շի-  
նարարությունն է, որի աշխատանքներն  
սկսվել են վաղուց:

Հայաստանի հողա—կլիմայական պայ-  
մաններում գյուղատնտեսության զարգա-  
ցումը մեծապես կապված է ոռոգման ցան-  
ցի ընդարձակման հետ: Այդ տեսակետից  
Թալինի ջրանցքի կառուցումը դառնում է  
առաջնակարգ խնդիր:

Նախատեսված է այդ ջրանցքի միջոցով  
ոռոգել և ջրով ապահովել Թալինի ու Հոկ-  
տեմբերյանի շրջանների ձմեռային արդա-  
վայրերը՝ 76 հազար հեկտար տարածու-  
թյամբ: Դրանից՝ 34 հազար հեկտարը հատ-  
կացվելու է տեխնիկական թանկարժեք  
կոպտությունների, պտղատու աղբիների մշա-  
կության և բանջարաբուծության համար,  
իսկ 42 հազար հեկտարը (որն ապահովվելու  
է գործածական ջրով)՝ կերաբույսերի մշա-  
կության և անասնաբուծության զարգացման  
համար:

Թալինի ջրանցքը ռեսպուբլիկայի ժողո-  
վրդական տնտեսության մեջ բացառիկ  
դեր է խաղալու: Զրանցքը ընդգրկող օգտա-

կար տարածության վրա նախատեսված  
է կազմակերպել երկու խոշոր շրջան, որոնք  
տնտեսական տեսակետից ետ չեն մնա Ար-  
տաշատի կամ Հոկտեմբերյանի շրջաններից  
Ապագա շրջանների աշխարհագրական պայ-  
մանները լայն հարավորություն են տալիս  
լիովին մեքենայացնելու գյուղատնտեսական  
աշխատանքները, աճեցնելու բազմատեսակ  
կուլտուրաներ, զարգացնելու պահածոների  
գինու—կոնյակի արտադրությունը:

Այդ տեղիտրիայի զգալի մասը, որը  
բռնում է 42 հազար հեկտար տարածություն  
և կազմում է ռեսպուբլիկայի ձմեռային  
արտադրանքի 30 տոկոսը, ապահովվելու  
ջրով և ծառայելու է անասնապահությանը  
Այստեղ լայն նախադրյալներ կան կեր-  
հզոր բազա ստեղծելու և անասնաբուծու-  
թյունը լայն թափով զարգացնելու համար  
Ջրի պակասության հետևանքով, այժմ այդ  
տարածության վրա ձմեռելու համար պահ-  
վում են ոչ ավելի 30 հազար գլուխ եղջյու-  
րավոր անասուն, իսկ ջրով ապահովվու-  
թեպքում այդ գլխաքանակը կհասնի ավելի  
քան 150 հազարի:

Վերահիշյալ տեղիտրիաների ջրամատու-

կարարման աղբյուրը հանդիսանում է Ախուրյան գետը՝ Ղարսաշայ վտակով։ Դրանց ջրերը ռացիոնալ օգտագործելու համար նախատեսվում է կառուցել Ախուրյանի ջրամբարը։

Պատկերացնելու համար, թե ջրանցքի կառուցումը ինչպիսի ջանքեր է պահանջում, բավական է նշել, որ միայն հողային աշխատանքների ծավալը կազմելու է մեկ միլիոն խորանարդ մետր։ Կատարվելու է ավելի քան 250 հազար խորանարդ մետր բետոնային և քարային շարվածք։ Արդեն մոտ 800 դժամետր տարածության վրա հանվել է

116 հազար խորանարդ մետր հողային փորվածք։ Նախապատրաստություն է տեսնված մեքենայացնելու խորը շերտի հողի հանումը։ Սարքավորվելու է հզոր կաբել կրան, որով հնարավոր կլինի 16 մետր բարձրության և 600 դժամետր հրկաթոթյան վրա, ցանկացած տեղում իջեցնել զանազան շինանյութեր։

Ավարտվում են կենտրոնական էլեկտրակայանի, ենթակայանների սարքավորումը և բարձր լարման հաղորդման գծի անցկացումը, որոնք շինարարությունը կապահովին էլեկտրական էներգիայով։

